«Արարատյան Բարիքներ» ՍՊԸ-ի տնօրեն
Մ. Շահինյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը լուծելու մասին

«Երվանդ Օտյանի անվան N7» հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Գնորդ) և «Արարատյան Բարիքներ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Վաճառող) միջև 2024 թվականի հունվարի 9-ին կնքվել է «Երվանդ Օտյանի անվան N7» հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման թիվ ԵՕԱ7ՀԴ-ԳՀԱՊՁԲ-24/1-3 պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Համաձայն «Արարատյան Բարիքներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրության Վաճառողը առաջարկում է լուծել Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի ապահովման գումարը կազմում է 54000 /հիսունչորս հազար/ ՀՀ դրամ, իսկ որակավորման ապահովման գումարը՝ 81000 /ութսունմեկ հազար/ ՀՀ դրամ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024 թվականի փետրվարի 2-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները, ապա Վաճառողը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Պատվիրատուի 900328000485 հաշվեհամարին և վճարված կտրոնները ներկայացնել Պատվիրատուի գնումների բաժնին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ Վ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Շ. Հարությունյան
Գնումների համակարգող
Հեռ.՝ +37498122209